ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
ք. Մարալիկ, Մադաթյան փ. 1, հեռ. 0242- 2-22-37, ani.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 120-Ա

<<25>> սեպտեմբերի 2025 թվական քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ԱՐԿԱԴԻ ՏԵՐ-ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ՓՈՂՈՑ, 10 ՇԵՆՔԻ ԹԻՎ 7/1 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԱՐԱՆԸ ԸՆԴՀԱՆՈՒՐ, ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՎՅԱԼ ԲՆԱԿԱՐԱՆԻ ԲՆԱԿԻՉ ՄԵԼԻՔ ՊԱՏՎԱԿԱՆԻ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ ՉՈՐՍ ԱՆՁԻՑ ԲԱՂԿԱՑԱԾ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, 102-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթներով, հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականությունը հանդիսացող Մարալիկ քաղաքի Արկադի Տեր-Թադևոսյան փողոցի 10-րդ շենքի թիվ 7/1 բնակարանը օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում տվյալ բնակարանի բնակիչների կողմից չի սեփականաշնորհվել և Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թվականի մարտի 14-ի N 51 որոշմամբ հաստատված N 7 հավելվածով Մարալիկ քաղաքի պետական բնակելի ֆոնդը և պետական ոչ բնակելի տարածքները սեփականության իրավունքով փոխանցվել են համայնքին, հիմք ընդունելով <<Հայաստանի ազգային արխիվ>> պետական ոչ առևտրային կազմակերպության Մարալիկի տարածքային ներկայացուցչության 02.06.2023 թ. N Մր-180 արխիվային տեղեկանքը, համաձայն որի Անիի շրջխորհրդի գործկոմի 1980 թվականի փետրվարի 14-ի թիվ 3 արձանագրության որոշմամբ Մարալիկ ավանի թիվ 10 շենքի 1-ին մուտքի 4-րդ հարկի 3 սենյականոց թիվ 7 բնակարանը /ներկայումս գործող հասցեն՝ մարզ Շիրակ Անի համայնք, քաղաք Մարալիկ Արկադի Տեր-Թադևոսյան փողոցի 10-րդ շենք 7/1 բնակարան/ հատկացվել է Պատվական Եղիազարի Ալեքսանյանի /մահացած՝ 05.04.2018թ./ 4 անձից բաղկացած ընտանիքին, հաշվի առնելով քաղաքացի Մելիք Պատվականի Ալեքսանյանի 2023 թվականի դեկտեմբերի 19-ի դիմումը և Մելիք Պատվականի Ալեքսանյանի ընտանիքը նշված հասցեում փաստացի բնակվելու վերաբերյալ Անիի համայնքապետարանի աշխատանքային խմբի կողմից կազմված 2025 թվականի սեպտեմբերի 9-ի արձանագրությունը.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին
որոշում է

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականությունը հանդիսացող Մարալիկ քաղաքի Արկադի Տեր-Թադևոսյան փողոցի 10-րդ շենքի թիվ 7/1 հասցեում գտնվող երեք սենյականոց բնակարանը /կադաստրային ծածկագիր՝ 08-003-0042-0001-057-007, Վկայական՝ N 11072024-08-0037, մակերեսը՝ 73,48 քառակուսի մետր// նվիրել տվյալ բնակարանում հաշվառված և փաստացի բնակվող քաղաքացի Մելիք Պատվականի Ալեքսանյանի չորս անձից բաղկացած ընտանիքին /Անձնագիր՝ AO0282199, տրված՝ 11.07.2025թ, 028-ի կողմից, հետագայում՝ Նվիրառու/:

2. Սույն որոշման 1-ին կոտով նվիրվող բնակարանի նկատմամբ համասեփականատեր ճանաչել՝ Մելիք Պատվականի Ալեքսանյանին, կնոջը՝ Օսան Կոյրունի Ալեքսանյանին /Անձնագիր՝ AT0699160, տրված՝ 16.03.2021թ, 022-ի կողմից/, որդուն՝ Ալեքսան Մելիքի Ալեքսանյանին /Անձնագիր՝ AO0334942, տրված՝ 25.08.2025թ, 016-ի կողմից/ , որդուն՝ Վահան Մելիքի Ալեքսանյանին, /Անձնագիր՝ BA3646709, տրված՝ 19.11.2021թ, 227-ի կողմից/:

3. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար՝ Ա. Սարիբեկյանին.

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Նվիրառուի հետ կնքել անշարժ գույքի նվիրատվության պայմանագիր.

2) Սույն որոշումից բխող իրավունքները օրենքով սահմանված կարգով ենթակա են պետական գրանցման՝ Նվիրառուների միջոցներով:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

	Կողմ՝ 12	դեմ՝ 0	ձեռնպահ՝ 0
Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ	----------	----------	----------
Է. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ	----------	----------	----------
Ռ. ԱՐՇԱԿՅԱՆ	----------	----------	----------
Է. ՈՒՌՈՒՏՅԱՆ	----------	----------	----------
Ա. ՇԱԲՈՅԱՆ	----------	----------	----------
Հ. ՋԱՏԻԿՅԱՆ	----------	----------	----------

Ժ. ԱԼԵՔՅԱՆ	----------	----------	----------
Գ. ԹԱԹԵՎՈՍՅԱՆ	----------	----------	----------
Մ. ԵՆՈՔՅԱՆ	----------	----------	----------
Գ. ՀԱԿՈԲՅԱՆ	----------	----------	----------
Գ. ՊՈՂՈՍՅԱՆ	----------	----------	----------
Մ. ԱՍԼԱՆՅԱՆ	----------	----------	----------

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

<<25>> սեպտեմբերի 2025 թ.

քաղաք Մարալիկ